ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, Տավուշի մարզ, ք. Դիլիջան, Մյասնիկյան փ., շ. 55, Հեռ. (060)700131

N 1234-25
03 հունիս 2025 թ.

«ՓԱԽԱՆՅԱՆ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ
ՏՆՕՐԵՆ
ՀԱՍՄԻԿ ՓԱԽԱՆՅԱՆԻՆ
Ք. Երևան, Վարդանանց 8/3

Ծ Ա Ն Ու Ց Ում

Հարգելի՛ գործընկեր

Դիլիջանի համայնքապետարանի և «ՓԱԽԱՆՅԱՆ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ - ի, ի դեմս տնօրեն Հասմիկ Փախանյանի, (այսուհետ՝ Կատարող), միջև 2025 թվականի մարտի 21-ին կնքվել է ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԾՁԲ-25/04 ծածկագրով «Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար իրավաբանական ծառայությունների մատուցում» ծառայությունների մատուցման պայմանագիրը: Պայմանագրի 2.4.1 կետի համաձայն, Կատարողը պարտավոր է N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

Հաշվի առնելով, որ «ՓԱԽԱՆՅԱՆ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ -ի կողմից չեն կատարվում պայմանագրային պարտավորությունները, հիմք ընդունելով Դիլիջան համայնքի ղեկավարի 2025 թվականի հունիսի 3-ի թիվ 79 կարգադրությունը, Դիլիջանի համայնքապետարանի և «ՓԱԽԱՆՅԱՆ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ - ի միջև 2025 թվականի մարտի 21-ին կնքված ՀՀ-ՏՄԴՀ-ԳՀԾՁԲ-25/04 ծածկագրով «Դիլիջանի համայնքապետարանի կարիքների համար իրավաբանական ծառայությունների մատուցում» ծառայությունների մատուցման պայմանագիրը համարել միակողմանի լուծված;

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն, Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ եթե սույն ծանուցումը ստանալուց հետո հինգօրյա ժամկետում վճարվի պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, (վճարվող գումարի չափը կազմում է 1 000 000 (մեկ միլիոն) ՀՀ դրամ, գումարը անհրաժեշտ է վճարել Դիլիջանի համայնքապետարանի 900405051716 հաշվեհամարին) ապա «ՓԱԽԱՆՅԱՆ ԸՆԴ ՓԱՐԹՆԵՐՍ» ՍՊԸ -ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՍԱՐԳՍՅԱՆ**

Կատ.՝ ՀՀ Դիլիջանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի մշակողակատար Վարդան Գրիգորյան
աշխ հեռ. +37460700134 բջջ. +37494774911